

ՄԱՐՄԱՐԱԿԵՐՏ ԵՐԿՈՒ ՆՈՐ ԽՈՐԱՆՆԵՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱՅԻ Ս. ՊՈՂՈՍ-ՊԵՏՐՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ

Եգիպտոսի հայոց առաջնորդական տեղապահ տ. Զավեն եպս. Չինչինյանը Վեհափառ Հայրապետին գրած իր 23 սեպտեմբեր 1972 թվակիր նամակում տեղեկացնում է, որ Ալեքսանդրիայի հայոց ս. Պողոս-Պետրոս եկեղեցու մուտքի փայտյա երկու հնացած խորանների փոխարեն կառուցել են մարմարյա նոր խորաններ՝ նվիրատվությամբ և ծախքով տեղի հայոց թեմական և քաղաքական ժողովի անդամ տիար Լևոն Հյուրմուզի։

Սույն խորանները կառուցվել են ազգիս Վեհափառ Հայրապետ Տ. Տ. Վազգեն Ա-ի ծննդյան 60 և գահակալության 15-ամյակի առիթով։ Խորանները և նրանց կողքին պատրաստված նաև երկու աշտանակները կառուցվել են եգիպտական բարձրորակ մարմարով։



Ալեքսանդրիայի հայոց ս. Պողոս-Պետրոս եկեղեցի. մուտքին՝ նորակառույց երկու մարմարյա խորանները

Սույն խորանների օծումը տեղի պիտի ունենա հոկտեմբերի 29-ին, կիրակի օրը։

Աջակողմյան խորանի վրա բանդակված է հայրապետական նշան, որի ներքևում զետեղված է հետևյալ արձանագրությունը.

«Կամօքն Աստուծոյ
Կառուցաւ խորանս եւ աշտանակս
Ի պանծացումն
Կաթողիկոսին Ամենայն Հայոց
Տեառն Տեառն Վազգենի Առաջնոյ
Վասն վաթսունամեակի ծննդեան Նորին յամի Տեառն ՌՆԻ 1971։

Իսկ ձախակողմյան խորանի վրա գրված է.

Կամօքն Աստուծոյ
Օծեցան խորանս եւ աշտանակս
Ի հայրապետութեան Ամենայն Հայոց
Տեառն Տեառն Վազգենի Առաջնոյ
Եւ առաջ. տեղապ. հայոց Եգիպտոսի
Տ. Զաւենի ս. եպս. Չինչինեանի
Կառուցաւ արդեամբ եւ ծախիւք
Լեւոնի Հիւրմուզ
Վասն յիշատակի ծնողաց իւրոց
Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի։

Խորանների վրա զետեղված են ս. Էջմիածնից բերված երկու խաչքարեր, որոնք տիար Լևոն Հյուրմուզը նվեր է ստացել Վեհափառ Հայրապետից 1969 թվականի մեռոնօրհնության օրերին։

Աջակողմյան խորանի արձանագրությունը